ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՆՑ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԱՊԵՍ ՀՐԱՊԱՐԱԿԵԼՈՒ ԲԱՆԱԿՑԱՅԻՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Պատվիրատուն՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը, որը գտնվում է ք.Երևան, Մ.Ադամյան-1 հասցեում, ստորև ներկայացնում է ՀՀ-ՖՆ-ԲԸԱՀ-ԱՇՁԲ-1 ծածկագրով առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգով գնումներ կատարելու ընթացակարգի արդյունքում 2014թ-ի հուլիսի 18-ին կնքված ՀՀ-ՖՆ-ԲԸԱՀ-ԱՇՁԲ-1 ծածկագրով պայմանագրում 2014թ-ի դեկտեմբերի 18-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը:

Փոփոխության պատճառ: Անհրաժեշտություն է առաջացել երկարաձգել աշխատանքների կատարման ժամկետը:

Փոփոխության նկարագրություն: Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ժամկետը երկարաձգվել է մինչև՝ 2015 թվականի հուլիսի 1-ը ներառյալ::

Փոփոխության հիմնավորում: ՀՀ կառավարության 19.11.2014թ. թիվ 1306-Ն որոշում:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Գ.Ղազարյանին:

Հեռախոս՝ 060 700 651:

Էլ. փոստ՝ gugks@mail.ru:

Պատվիրատու՝ **ՀՀ ֆինանսների նախարարություն**

Համաձայնագիր-1
18.07.14թ. կնքված N ՀՀ-ՖՆ-ԲԸԱՀ-ԱՇՁԲ-1 գնման պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին

ք. Երևան «18» դեկտեմբերի
2014թ.

ՀՀ ֆինանսների նախարարությունը, այսուհետ՝ «Պատվիրատու», ի դեմս ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի ղեկավար Ա.Արզումանյանի մի կողմից, և «Սահակյանշին» ՓԲԸ-ն, այսուհետ՝ «Կապալառու», ի դեմս ընկերության տնօրեն Ս.Սահակյանի մյուս կողմից, երկուսը միասին այսուհետև՝ կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով 18.07.14թ. կնքված N ՀՀ-ՖՆ-ԲԸԱՀ-ԱՇՁԲ-1 գնման պայմանագրի /այսուհետև՝ Պայմանագիր/ 8.4-րդ կետը կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 19.11.2014թ. թիվ 1306-Ն որոշումը՝ Կողմերը որոշեցին երկարաձգել Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ժամկետը՝ վերջնաժամկետը սահմանելով մինչև 2015 թվականի հուլիսի 1-ը ներառյալ:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.3. Սույն պայմանագրում կողմերի չնշված պարտավորությունները թողնվում են անփոփոխ:

2.4. Սույն համաձայնագիրը և հավելվածը կազմված է հայերեն լեզվով, /երկու/ օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Պատվիրատու	Կապալառու
ՀՀ ֆինանսների նախարարություն	«Սահակյանշին» ՓԲԸ
ք. Երևան, Մ.Ադամյան-1	ք.Երևան, Արարատյան-117/1
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն	«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 900013574018, 900013202016	Հ/Հ 1150000169370100
ՀՎՀՀ 02629081	ՀՎՀՀ 02224769
ՀՀ ՖՆ աշխատակազմի ղեկավար՝ Ա.Արզումանյան	«Սահակյանշին» ՓԲԸ-ի տնօրեն՝ Ս.Սահակյան
(ստորագրություն) Կ.Տ	(ստորագրություն) Կ.Տ